

Ուշադրություն. ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ՝ ՏԱՐԵԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՆՈւԻՏԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԶՓ ՄԱՐՄԱՆ ԽՎԱԶՈՂ/ԵՂԱՆԱԿՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ և ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Ամսական հավասարաչափ (անուիտետային) մարումներով գրաֆիկի դեպքում, վարկի մարումները հաշվարկվում են հետևյալ բանաձևի համաձայն.

$$R = P \times r / (1 - 1/(1+r)^n), \text{ որտեղ՝}$$

R - Վարկի ամսական վճարումն է:

P - Վարկի գումարն է:

n - Վարկի ամբողջ ժամանակահատվածի համար վարկային վճարումների ընդհանուր թիվն է (ամիսների քանակը):

r – Վարկի ամսական տոկոսադրույքը, որը հավասար է Վարկի տրամադրման պահին Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին:

Ամսական վճարումների կազմում Վարկի պարտքի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի հաշվարկմամբ.

$$Pt = R \times ((1 - 1/(1+r)^n) / r) \text{ բանաձևով, որտեղ՝}$$

Pt - Վարկի փաստացի մնացորդն է t ժամանակահատվածի վերջում:

R - Վարկի ամսական վճարումն է:

t - Վճարումների քանակն է, որոնք պետք է կատարվեն մինչև Վարկի օգտագործման ժամկետի ավարտը (ամիսների քանակը):

r – Վարկի ամսական տոկոսադրույքն է, որը հավասար է Վարկի տրամադրման պահին Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A - կրեդիտի գումարը /կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը/

n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

Dn –կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i – տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

1) Ոսկյա իրերի գրավադրամամբ վարկի օրինակ.

- Տրամադրվող գումար՝ 100.000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 24%՝ հաշվարկված վարկի նվազող մնացորդի վրա
- Մարման ժամկետ՝ 3 ամիս
- Մարումներ՝ տոկոսագումարները՝ ամենամսյա, մայր գումարը՝ ժամկետի վերջում
- Հաճախորդի կոմից կատարվող այլ վճարումներ՝
 - Վարկային հաշվի միանվագ սպասարկման վճար վարկի ստացման պահին 1 000 դրամ

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 32,09%:

2) Երաշխավորությամբ ապահովված վարկի օրինակ.

- Տրամադրվող գումար՝ 1.000.000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 24%՝ հաշվարկված վարկի նվազող մնացորդի վրա
- Մարման ժամկետ՝ 12 ամիս
- Մարումներ՝ ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետային)
- Հաճախորդի կոմից կատարվող այլ վճարումներ՝
 - Վարկային հաշվի միանվագ սպասարկման վճար վարկի ստացման պահին /վարկի գումարի երեք տոկոս/ - 30 000 դրամ

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 34,55%:

3) Ավտոմեքենայի ձեռք բերման նպատակով վարկի օրինակ.

- Տրամադրվող գումար՝ 2.000.000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 24%՝ հաշվարկված վարկի նվազող մնացորդի վրա
- Մարման ժամկետ՝ 24 ամիս
- Մարումներ՝ ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետային)
- Հաճախորդի կոմից կատարվող այլ վճարումներ՝
 - Ավտոմեքենայի գնահատման միանվագ վճար՝ 10 000 դրամ,
 - Գրավի նոտարական միանվագ վճար՝ 13 000 դրամ,
 - Ոստիկանության միանվագ վճար՝ 5 000 դրամ,
 - Վարկային հաշվի միանվագ սպասարկման վճար վարկի ստացման պահին /վարկի գումարի երկու տոկոս/ - 40 000 դրամ
 - Ապահովագրական տարեկան վճար՝ վարկի մնացորդի 2.5%-ի չափով

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 35,23%:

4) Ավտոմեքենայի գրավադրման նպատակով վարկի օրինակ.

- Տրամադրվող գումար՝ 3.000.000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 22%՝ հաշվարկված վարկի նվազող մնացորդի վրա
- Մարման ժամկետ՝ 36 ամիս
- Մարումներ՝ ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետային)
- Հաճախորդի կոմից կատարվող **այլ վճարումներ**
 - Ավտոմեքենայի գնահատման միանվագ վճար՝ 10 000 դրամ,
 - Գրավի նոտարական միանվագ վճար՝ 13 000 դրամ,
 - Ոստիկանության միանվագ վճար՝ 5 000 դրամ,
 - Վարկային հաշվի միանվագ սպասարկման վճար վարկի ստացման պահին /վարկի գումարի երկու տոկոս/ - 60 000 դրամ
 - Ապահովագրական տարեկան վճար՝ վարկի մնացորդի 2.5%-ի չափով

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 29,58%:

5) Անշարժ գույքի գրավադրմամբ վարկի օրինակ.

- Տրամադրվող գումար՝ 5.000.000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 20%՝ հաշվարկված վարկի նվազող մնացորդի վրա
- Մարման ժամկետ՝ 60 ամիս
- Մարումներ՝ ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետային)
- Հաճախորդի կոմից կատարվող **այլ վճարումներ**
 - Անշարժ գույքի գնահատման միանվագ վճար՝ 15 000 դրամ,
 - Սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի վճար՝ 10 000 դրամ,
 - Գրավի պայմանագրի նոտարական վավերացման միանվագ վճար՝ 15 000 դրամ,
 - Գրավի գրանցման վճար՝ 27 000 դրամ
 - Վարկային հաշվի միանվագ սպասարկման վճար վարկի ստացման պահին /վարկի գումարի մեկ տոկոս/ - 50 000 դրամ

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 23,32%:

Ուշադրություն՝ն. ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ՝ ՈՐԻ ՄԱՄԵՆ ՎԱՐԿԱՌՈՆ ՆԱԽԱՊԵՍ ՏԵՂԵԿԱՑՎՈՒՄ Է: